

53. ՄԵՐ ԹԱԿՅԱՒՈՐԻՆ ԻՆՉ ՊԻՏԵՐ
 ЧТО НУЖНО ЦАРИЮ-ЖЕНИХУ?

$\text{♩} = 66$

Մեր թա - կյա-ւո-րին ինչ պի-տեր, կյոլ-խուն թաքոյ ու պը-սակ

պի - տեր, տր թա-քիկ շուռ կյեր, շու - ռու - մուռ կյեր,

թա-քիկ պա - րով տուն կյեր, տր թա-քիկ շուռ կյեր,

շու - ռու-մուռ կյեր, թա-քիկ պա - րով տուն կյեր:

1)

թա-քիկ պա - - - - - րով

ՄԵՐ ԹԱԿՅԱՒՈՐԻՆ Ի՞Նչ պիտէր

Մեր թակյանորին ի՞նչ պիտէր.

– Կյըլխին թաքյ ու պըսակ պիտէր,
Իոր թաքյիկ շուռ կյէր, շուռումուռ կյէր,
Թաքյիկ պարօզ տուն կյէր:

Մեր թակյանորին ի՞նչ պիտէր.

Խակյին կարմիր շըլվալ պիտէր.

Իոր թաքյիկ շուռ կյէր, շուռումուռ կյէր,
Թաքյիկ պարօզ տուն կյէր:

Մեր թակյանորին ի՞նչ պիտէր.

– Խակյին սարտիրի շալ պիտէր.

Իոր թաքյիկ շուռ կյէր, շուռումուռ կյէր,
Թաքյիկ պարօզ տուն կյէր:

Մեր թակյանորին ի՞նչ պիտէր.

– Մէշկին նըխշուն ճարիկ պիտէր,
Իոր թաքյիկ շուռ կյէր, շուռումուռ կյէր,
Թաքյիկ պարօզ տուն կյէր:

Մեր թանկանորին ի՞նչ պիտէր.

– Խակլին կարմիր սօլեր պիտէր,
Իոր թաքիկ շուռ կլէր, շուռումուռ կլէր,
Թաքիկ պանրօվ տուն կլէր:

Մեր թանկանորին ի՞նչ պիտէր.

– Կանաչ-կարմիր կապած պիտէր,
Իոր թաքիկ շուռ կլէր, շուռումուռ կլէր,
Թաքիկ պանրօվ տուն կլէր: